



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- ապրիլի 2017 թվականի №Ս  
քաղ. Երևան

**«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №688Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №688Ա որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0297 թույլտվության (այսուհետ՝ թույլտվություն) պայմանների 3.1 կետի 8-րդ ենթակետով սահմանված է «Տրանս» ազդականչը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի №03/11.1/1960-17 գրության համաձայն՝ իրականացված ռադիոէթերի մոնիթորինգի և չափումների արդյունքում հայտնաբերվել է, որ ընկերությանը պատկանող ռադիոցանցն աշխատել է իրեն չհատկացված ազդականչով,

գ) հանձնաժողովը 2017 թվականի փետրվարի 17-ի №ԱԲ-365Հ գրությամբ ընկերությունից պահանջել է պարզաբանումներ ներկայացնել՝ իր կողմից թույլտվության պայմանների խախտմամբ շարժական ռադիոկապի ցանցի շահագործման վերաբերյալ, սակայն վերջինս հանձնաժողովին որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ վերջինիս կողմից թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության

նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի N°ԱԲ-668Հ գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում ընկերությունը 2017 թվականի ապրիլի 12-ին դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ իր կողմից վերացվել է խախտումը և շարժական ռադիոկապի ցանցը շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով: Միաժամանակ՝ խնդրելով փոփոխություն կատարել թույլտվության պայմանների մեջ՝ «Տրանս» ազդականչը փոխարինելով «Ձյունիկ» ազդականչով, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 22-ից ընկերության նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N°688Ա որոշմամբ տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման N°0297 թույլտվության պայմանների 3.1 կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«8) ազդականչը՝ Ձյունիկ.»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**